

Մ. ԿՆՈՒՈՎԱՆ

ԱՊԱԿԵՆԱԿԻԿԸ



ԹԵՅՆՐԱՏ — ՄԱՆԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ — ՅԵՐԵՎԱՆ
1936

8310715
4-55

2011-05

Մ. ԿԼՈԿՈՎԱ

Այ

ՎՈՍԿԵՄԱԶԻԿԸ

Նկարներ՝ Զոտովի

Փոխադրեց՝ Հ. Հայրապետյան

Բ. Կրատարակություն

1068 3964
33442

1935

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ




Պատ. խմբ. Ա. Հայրյան.
Լեզ. խմբ. Արշ. Առատամյան.

Տեխ. խմբ. Հ. Տեր-Դավթյան.
Սրբագրիչ Մ. Գեվորգյան.

Հանձնված է արտադրության 20X 1934 թ. Ստորագրված է
տպելու 1X1 1935 թ. Սֆ. Ա6 — 105x148. Հրատ. № 2926.
Գլավիլիտ Վ.275. Պատվեր № 5017. Տիրաժ 15000 յ էլ

Тип. им. Стачки 1902 г. АЧКПТ Ростов-Дон



1.

Մանիկը հենց վոր զարթնեց, մլավոցի
ձայն լսեց:

Մանիկն անկողնից վեր թռավ ու գնաց
մլավանին փնտռելու:

Նայեց աթոռների տակը, սնդուկի յետևը,
մահճակալների տակը, մինչև անգամ վառա-



բանի մեջն ել նայեց, բայց չգտավ. միավոցը
կար, ինքը չկար:

Հանկարծ պահարանի տակից դուրս յե-
կավ մի դեղին, փափուկ փխիկ:

— Վա՛յ, ինչ լավ փխիկ ե, — ասաց Մա-
նիկը, վերցրեց փխիկին ու փաթաթեց իր
շապկի մեջ:

Ենպես լավ փխիկ եր վո՛ր. աչքերը կա-
նաչ, ինքը դեղին, ճանկերը պստիկ-պստիկ,



ենքան փափուկ ու կլոր, վոր չեյիը ջուկի,
թե թաթիկները վորտեղ են, պոչը վորտեղ:
Մանիկը փխիկին առաջ դրեց մայրիկի
գրպանում, հետո իր գուլպայի մեջ. ենքան
փոքրիկ եր, վոր ամեն տեղ տեղավոր-
վում եր:

Մանիկը փխիկի անունը դրեց Վոսկե-
մազիկ:

Ի՛նչ չարաճճին եր Վոսկեմազիկը. ամբողջ
օրը, առավոտից իրիկուն, թռչկոտում եր,
վազվզում, քաշքշում:



Մայրիկը, վոր ուզում եր կոշիկները հագնի,
տեսնում եր Վոսկեմագիկը մեջին ե: Մա-
նիկը վոր գլխարկը
վերցնում եր, տես-
նում եր Վոսկեմագիկը
մեջին ե: Մին-մին ել
բարձրանում եր տիկ-
նիկի մահճակալի վրա
ու պառկում: Մի ան-
գամ ել մտել եր հացի
փոքրիկ զամբյուղի
մեջ: Նայում ե, նա-
յում Մանիկը, վոր
խմանա, թե այս ինչ
դեղին բուլկի յե:

Նայեց-նայեց, տե-
սավ, վոր Վոսկեմա-
գիկն ե:

— Հիմար, հիմար
Վոսկեմագիկ: Միթե
կարելի յե այդքան չարություն անել:





2.

Անցավ մի քանի տարի:

Վոսկեմագիկը մեծ, դեղին կատու յեր
գարձել: Նիհարել եր ու տղեղացել, միայն
աչքերն առաջվա պես փայլում ելին:

Ամեն տարի Վոսկեմագիկը ձագ եր ունե-
նում, բայց մայրիկը բաժանում եր ուրիշ-
ներին, Մանիկի համար չեր թողնում:

— Վոսկեմագիկը բավական ե, — ասում
եր մայրիկը:

Մի որ մայրիկը գաթա յեր շինում, Մա-
նիկին ել կանչել եր, վոր իրան ոգնի:

— Մանիկ, արի Վոսկեմագիկին տանք
Սոնա տատին, շատ ե խնդրում: Շուտով





Վոսկեմաշիկը ձագեր ե ունենալու. մի լավը
կվերցնենք: Վոսկեմազիկը պառավել ե:

— Չեմ տա, իմ Վոսկեմազիկին վոշ վոքի
չեմ տա: Նա իսկի յեւ չի պառավել: Մին
եւ Վոսկեմազիկը նրանց սանը չի մնա, ելի
մեզ մոտ կգա:

— Իսկ մենք ձագերի հետ միասին կտանք,
այն ժամանակ ձագերից չի հեռանա:

— Վոշ, չեմ տա, չեմ տա. Վոսկեմազիկը
մեղք չէ:



Բայց և այնպես մայրիկը Մանիկին համոզեց:

— Սոնա տատը բարի կին է, Վոսկեմազիկին չի նեղացնի և ձագերից ամենալավը բեզ կտա:

Մի քանի օրից հետո Վոսկեմազիկը ձագեր ունեցավ:


Մանիկը իր համար մի մոխրագույն ձագ ընտրեց:

Հետո կանչեց իր ընկերուհուն — Սաթոյին: Զամյուղի մեջ մի շորի կտոր փռեցին, Վոսկեմազիկին և իրա չորս ձագերին զամյուղի մեջ դրին ու տարան Սոնա տատենց տուն:

3.


Յերկու օր Մանիկը գնում էր ձագերին տեսնելու, իսկ յերրորդ օրը Վոսկեմազիկն ինքը յեկավ:

Մանիկը նրան սիրեց, փայփայեց, իսկ Վոսկեմազիկն ուշադրութիւն չդարձրեց: Շարունակ դեռ ու դեռ էր նայում: Մտաւ



փայտանոցը, հետո բարձրացավ տանիքը, տանիքից իջավ ցանկապատի վրա ու փողոց դուրս յեկավ:

Մյուս օրը Վոսկեմազիկն ելի յեկավ, մտաւ փայտանոցը և յերկար ժամանակ այնտեղ մնաց:



Մյուս ուրը, վաղ առավոտյան, մայրիկը
Մանիկին զարթեցրեց:


— Վեր կաց, Մանիկ, վեր կաց, տես
Վոսկեմագիկն ինչ ե անում:

Արագ անկողնից վեր թռավ Մանիկը և
մայրիկի հետ բակը դուրս յեկան:

Դեռ շատ շուտ եր: Արեւը չեւ ծագել:
Փողոցում վոչ վոք չկար:

Մին ել տեսան Վոսկեմագիկը գլուխը
բարձր պահած, ատամներով մի ձագ բռնած
կամաց կամաց փողոցով գալիս ե:

— Վայ, մայրիկ, հիմի ձագը վար կընկնի:



Բայց Վոսկեմազիկը փողոցի դռան տակից
կամաց անցավ ու գնաց մտավ փայտանոց:
Քիչ հետո դուրս յեկավ, բայց ելի բերա-
նին ձագ չկար:

Մին ել գնաց Վոսկեմազիկը, մին ել յե-
կավ ու այդպես բոլոր փախկներին Սոնա
տատենց տնից փայտանոցը բերեց:

Մանիկը գնաց փայտանոցը և տեսավ,
վոր Վոսկեմազիկը մի անկյունում խսիրի
կտորի վրա պառկել ե, փխսիկներն ել կաթ
են ծծում:

— Վա՛յ, փխսիկ ջան, Վոսկեմազիկ ջան,
իմ սիրելի, ել քեզ վո՛չ վոքի, վո՛չ վոքի չեմ
տա, — ասաց Մանիկը և սկսեց փայփայել
փխսիկին:

Վոսկեմազիկն ել իր դեղին թաթը դրեց
Մանիկի ձեռքի վրա և սկսեց մոմռացնել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0390515

20 409

Ш11 348

3714



М. КЛОКОВА

ЗОЛОТУШКА

АРМЕНГИЗ — ЭРИВАВЬ